ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 50-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2019.02.11/10(1463) Հոդ.97	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	24.01.2019
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	05.02.2019
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	12.02.2019	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐԸ, 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՀԱՄԱՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԵՐՆ ԸՍՏ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2019 թվականի N 50-Ն

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԵՐԸ, 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՀԱՄԱՐ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԵՐՆ ԸՍՏ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 23.01.20 N 45-Ն, 14.01.21 N 13-Ն, 25.03.21 N 396-Ն, 30.12.21 N 2200-Ն, 29.12.22 N 2068-Ն)

Հիմք ընդունելով «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ, 13-րդ հոդվածի 1-ին, 14-րդ հոդվածի 2-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին վճարվում են՝

ա. ընտանեկան նպաստը,

բ. սոցիալական նպաստը,

գ. հրատապ օգնությունը՝ ընտանիքում երեխայի ծննդյան, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում տրվող միանվագ հրատապ օգնություն և եռամյակային հրատապ օգնություն.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների համար նախատեսված գումարների 97 տոկոսը նպատակաուղղվում է ընտանեկան նպաստի և սոցիալական նպաստի համար, ընտանիքում երեխայի ծննդյան, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում տրվող միանվագ հրատապ օգնությանը, իսկ 3 տոկոսը՝ եռամյակային հրատապ օգնության վճարմանը.

3) սահմանամերձ բնակավայրեր են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի N 163 որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված բնակավայրերը:

(1-ին կետը փոփ. 23.01.20 N 45-Ն, 14.01.21 N 13-Ն, 30.12.21 N 2200-Ն, 29.12.22 N 2068-Ն)

2. Հաստատել ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի և հրատապ օգնության վճարման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափերն ըստ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցները՝ համաձայն հավելվածի:

(2-րդ կետը փոփ. 23.01.20 N 45-Ն, 14.01.21 N 13-Ն, 25.03.21 N 396-Ն, 30.12.21 N 2200-Ն, 29.12.22 N 2068-Ն)

3. Սահմանել 2023 թվականին ընտանեկան նպաստի և սոցիալական նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորի մեծությունը՝ 28.00 միավոր:

(3-րդ կետը փոփ. 23.01.20 N 45-Ն, 14.01.21 N 13-Ն, 30.12.21 N 2200-Ն, 29.12.22 N 2068-Ն)

4. Սահմանել ընտանեկան նպաստի բազային մասի չափը, 18 տարին չլրացած անդամին տրվող հավելման տարբերակման պայմաններն ու տարբերակված չափերը՝

1) ընտանեկան նպաստի բազային մասը՝ 20000 դրամ.

2) 28.01-35.00 անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 5500 դրամ,

բ. չորս և ավելի՝ 18 տարին չլրացած անդամ ունեցող ընտանիքների (այսուհետ՝ բազմազավակ ընտանիք) յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

գ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,

դ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ.

3) 35.01-39.00 անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6000 դրամ,

բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,

գ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

դ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ.

4) 39.01 և ավելի անապահովության միավորով ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքների՝

ա. յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 6500 դրամ,

բ. բազմազավակ ընտանիքի յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7500 դրամ,

գ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 7000 դրամ,

դ. բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրերի բազմազավակ ընտանիքների յուրաքանչյուր 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումը՝ 8000 դրամ:

(4-րդ կետը փոփ. 23.01.20 N 45-Ն, 29.12.22 N 2068-Ն)

5. Սահմանել սոցիալական նպաստի չափը՝ 20000 դրամ:

(5-րդ կետը փոփ. 29.12.22 N 2068-Ն)

6. Սահմանել հրատապ օգնությունների չափերը՝

1) միանվագ հրատապ օգնության չափերը՝

ա. երեխայի ծննդյան դեպքում՝ 50000 դրամ,

բ. երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու դեպքում՝ 25000 դրամ,

գ. ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 50000 դրամ.

2) եռամյակային հրատապ օգնության ամսական չափը՝ 20000 դրամ:

(6-րդ կետը փոփ. 29.12.22 N 2068-Ն)

7. Թույլատրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության պետին, համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ, 2023 թվականի չորրորդ եռամյակում, ըստ անհրաժեշտության, կատարել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված ֆինանսական միջոցների վերաբաշխում՝ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների միջև՝ ընդհանուր միջոցների մեկ տոկոսի սահմաններում:

(7-րդ կետը փոփ. 23.01.20 N 45-Ն, 14.01.21 N 13-Ն, 25.03.21 N 396-Ն, 30.12.21 N 2200-Ն, 29.12.22

N 2068-Ն)

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

(8-րդ կետը փոփ. 23.01.20 N 45-Ն, 14.01.21 N 13-Ն, 30.12.21 N 2200-Ն, 29.12.22 N 2068-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

2019 թ. փետրվարի 5
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
հունվարի 24-ի N 50-Ն որոշման

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆՊԱՍՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԱՓԵՐՆ ԸՍՏ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ

(վերնագիրը փոփ. 25.03.21 N 396-Ն)

մարզ	Տարածքային կենտրոն	2023 թվական			
		2023 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված գումարի բաշխումը (դրամ)	այդ թվում՝ ընտանեկան նպաստի համար նախատեսված միջին ամսական գումարը (դրամ)	այդ թվում՝ սոցիալական նպաստի համար նախատեսված միջին ամսական գումարը (դրամ)	այդ թվում՝ միանվագ հրատապ օգնությունների, եռամսյակային հրատապ օգնության (3%) համար նախատեսված ամսական գումարի բաշխումը (դրամ)
1	2	3	4	5	6
ԱՐԱՐԱՏԻ	ԱՐԱՐԱՏ	165,744,329.9	10,166,000.0	3,040,000.0	606,027
	ԱՐՏԱՇԱՏ	942,750,515.5	64,389,000.0	10,900,000.0	3,273,543
	ՎԵԴԻ	767,698,969.1	55,679,000.0	5,460,000.0	2,835,914
	ՄԱՍԻՍ	763,597,938.1	51,700,000.0	9,320,000.0	2,613,162
	Ընդամենը՝	2,639,791,752.6	181,934,000.0	28,720,000.0	9,328,646
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ	ԱՇՏԱՐԱԿ	825,129,896.9	57,015,500.0	8,920,000.0	2,825,325
	ԱՊԱՐԱՆ	302,903,092.8	20,890,500.0	3,240,000.0	1,111,424
	ԾԱՂԿԱՀՈՎԻՏ	223,364,948.5	17,154,500.0	680,000.0	779,246
	ԹԱԼԻՆ	532,194,845.4	37,252,000.0	5,140,000.0	1,957,570
	Ընդամենը՝	1,883,592,783.5	132,312,500.0	17,980,000.0	6,673,565
ԱՐՄԱՎԻՐԻ	ԱՐՄԱՎԻՐ	865,781,443.3	59,136,500.0	9,960,000.0	3,051,954
	ՎԱՂԱՐՇԱՊԱՏ	1,083,023,711.3	73,274,000.0	13,060,000.0	3,917,976
	ԲԱՂՐԱՄՅԱՆ	244,125,773.2	17,396,000.0	2,100,000.0	847,814
	Ընդամենը՝	2,192,930,927.8	149,806,500.0	25,120,000.0	7,817,744
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ	ԳԱՎԱՌ	853,129,896.9	61,815,500.0	6,300,000.0	2,978,658
	ՍԵՎԱՆ	529,280,412.4	35,361,000.0	6,960,000.0	1,785,701
	ՎԱՐԴԵՆԻՍ	808,150,515.5	56,445,500.0	7,980,000.0	2,920,376
	ՃԱՄԲԱՐԱԿ	260,783,505.2	17,267,500.0	3,500,000.0	964,459
	ՄԱՐՏՈՒՆԻ	1,634,541,237.1	124,585,000.0	5,680,000.0	5,946,770

	Ընդամենը՝	4,085,885,567.0	295,474,500.0	30,420,000.0	14,595,964
ԼՈՌՎԱ	ԹՈՒՄԱՆՅԱՆ	421,762,886.6	21,820,000.0	11,960,000.0	1,366,907
	ՏԱՇԻՐ	406,594,845.4	25,553,500.0	7,040,000.0	1,289,404
	ՎԱՆԱՁՈՐ	1,894,186,597.9	106,480,500.0	45,160,000.0	6,208,383
	ՍՊԻՏԱԿ	891,764,948.5	57,461,000.0	13,640,000.0	3,212,746
	ՍՏԵՓԱՆԱՎԱՆ	569,327,835.1	34,529,000.0	11,100,000.0	1,814,986
	Ընդամենը՝	4,183,637,113.4	245,844,000.0	88,900,000.0	13,892,426
ԿՈՏԱՅՔԻ	ԱԲՈՎՅԱՆ	994,689,690.7	62,817,000.0	16,760,000.0	3,313,808
	ՀՐԱԶԴԱՆ	794,262,886.6	50,755,000.0	12,800,000.0	2,633,574
	ՉԱՐԵՆՑԱՎԱՆ	377,480,412.4	23,615,500.0	6,560,000.0	1,281,201
	ՆԱԻՐԻ	655,831,958.8	44,951,000.0	7,460,000.0	2,241,663
	Ընդամենը՝	2,822,264,948.5	182,138,500.0	43,580,000.0	9,470,246
ՇԻՐԱԿԻ	ԱՐԹԻԿ	814,210,309.3	56,309,500.0	8,660,000.0	2,881,359
	ԱՄԱՍԻԱ	58,552,577.3	3,723,000.0	960,000.0	196,381
	ՄԱՐԱԼԻԿ	371,288,659.8	26,072,500.0	3,540,000.0	1,328,222
	ԱԽՈՒՐՅԱՆ	551,477,319.6	39,401,500.0	4,620,000.0	1,934,943
	ԱՇՈՑՔ	91,047,422.7	6,348,000.0	920,000.0	319,285
	ԳՅՈՒՄՐԻ	2,450,602,061.9	147,514,500.0	48,780,000.0	7,922,338
	Ընդամենը՝	4,337,178,350.5	279,369,000.0	67,480,000.0	14,582,529
ՍՅՈՒՆԻՔԻ	ԳՈՐԻՍ	369,720,618.6	23,502,000.0	6,040,000.0	1,268,052
	ԿԱՊԱՆ	240,496,907.2	9,273,500.0	10,100,000.0	667,909
	ՄԵՂՐԻ	74,859,793.8	3,877,000.0	2,120,000.0	241,316
	ՍԻՍԻԱՆ	244,606,185.6	16,894,000.0	2,620,000.0	869,849
	Ընդամենը՝	929,683,505.2	53,546,500.0	20,880,000.0	3,047,125
ՏԱՎՈՒՇԻ	ԴԻԼԻՋԱՆ	328,479,381.4	20,227,500.0	6,060,000.0	1,085,782
	ԻՋԵՎԱՆ	538,736,082.5	35,517,000.0	7,560,000.0	1,817,674
	ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ	424,069,072.2	26,886,000.0	7,020,000.0	1,433,089
	ԲԵՐԴ	377,136,082.5	24,333,500.0	5,760,000.0	1,334,507
	Ընդամենը՝	1,668,420,618.6	106,964,000.0	26,400,000.0	5,671,052
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ	ՋԵՐՄՈՒԿ	69,149,484.5	3,897,500.0	1,640,000.0	224,957
	ՎԱՅՔ	112,601,030.9	7,141,500.0	1,800,000.0	441,919
	ԵՂԵԳՆԱՁՈՐ	442,790,721.6	28,801,000.0	6,560,000.0	1,538,227
	Ընդամենը՝	624,541,237.1	39,840,000.0	10,000,000.0	2,205,103
ԵՐԵՎԱՆԻ	ԱՋԱՓՆՅԱԿ ԵՎ ԴԱՎԻԹԱՇԵՆԻ	447,552,577.3	17,520,500.0	18,440,000.0	1,335,548
	ԱՐԱԲԿԻՐ ԵՎ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆԻ	513,289,690.7	16,890,500.0	24,440,000.0	1,443,641
	ԷՐԵԲՈՒՆԻ ԵՎ ՆՈՒԲԱՐԱՇԵՆԻ	578,210,309.3	32,037,000.0	14,360,000.0	1,787,192
	ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ ՄԱՐԱՇԻ	363,859,793.8	13,384,500.0	15,840,000.0	1,097,149
	ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱՅԻ	584,858,762.9	32,981,500.0	13,880,000.0	1,876,730
	ՆՈՐ ՆՈՐՔ ԵՎ ԱՎԱՆԻ	604,335,051.5	27,305,000.0	21,260,000.0	1,796,254
	ՇԵՆԳԱՎԻԹԻ	667,029,896.9	32,344,500.0	21,180,000.0	2,061,325
	Ընդամենը՝	3,759,136,082.5	172,463,500.0	129,400,000.0	11,397,840
ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՀՀ		29,127,062,886.6	1,839,693,000	488,880,000	98,682,241

(հավելվածը խմբ. 23.01.20 N 45-Ն, 14.01.21 N 13-Ն, փոփ. 25.03.21 N 396-Ն, խմբ. 30.12.21 N 2200-Ն, 29.12.22 N 2068-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան